ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 101-Ա

03 ապրիլի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-072-0022-0003/ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Ձիթհանքով բնակավայրի բնակիչ Ֆրանց Նազարեթի Ստեփանյանի դիմումը. ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-072-0022-0003/,բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Ձիթհանքով բնակավայր, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, 6 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

Պաշտոնակատար

«03» ապրիլի 2023 թվական

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 102-Ա

<<04>> ապրիլի 2023 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑ,1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 5 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-100-0046-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ինքնակամ շինության հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023-03-24 տեղեկանքը /մուտքագրման ծածկագիր՝ 2023C4EZ85/ և քաղաքացի Կարապետ Հակոբի Կնյազյանի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան ներկայացված 2023 թվականի մարտի 20-ի դիմումը՝ 2004-2010 թվականներին ինքնակամ կառուցված բնակելի տունը և բնակելի օժանդակ շինություններն օրինական ճանաչելու վերաբերյալ.

որոշում եմ՝

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի՝ Կարապետ Հակոբի Կնյազյանին /ծնված՝ 02-ը նոյեմբեր 1962 թվական, անձնագիր N AT0699166, տրված 16.03.2021 թվականին՝ 022-ի կողմից, Դինա Վասիլեվնա Կնյազյանին /ծնված՝ 24-ը ապրիլ 1973 թվական Ն/Ք N 005573100, տրված 23.05.2014 թվականին՝ 022-ի կողմից, Կնյազ Կարապետի Կնյազյանին /ծնված՝ 15-ը օգոստոսի 1991 թվական անձնագիր N BA0775112 , տրված 14.01.2016 թվականին՝ 022-ի կողմից/ /հետագայում՝ քաղաքացիներ/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (Հիմք՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 24.05.1991 N 1 որոշում) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի 8-րդ փողոց,1-ին նրբանցք 5 բնակելի տուն հասցեում գտնվող 08-100-0046-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.15395 հա մակերեսով հողամասում 2004 թվականին ինքնակամ կառուցված 339.92

քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, 2005 թվականին ինքնակամ կառուցված 33.67 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով անասնաշենքը, 2010 թվականին ինքնակամ կառուցված 8.30 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով պարիսպը /հետագայում՝ շինություններ/ բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության շինությունները ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինությանների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունները՝

ա) չեն գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնակամ շինությունների օրինական ճանաչվելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա) Ինքնակամ կառուցված բնակելի տան շինությունը, որի ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 339.92 քառակուսի մետր, որպես բնակելի նշանակության կառույց, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 13-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 17-րդ գոտում ընդգրկված Սառնաղբյուր բնակավայրի համար սահմանված շինության 0.0743 գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

339.92 քառակուսի մետր X 10000 դրամ X 0.0743 = 252 560 (երկու հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

բ) Ինքնակամ կառուցված բնակելի օժանդակ շինությունները, որոնց ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 41.97 քառակուսի մետր, որպես բնակելի օժանդակ

նշանակության կառույց, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 13-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 17-րդ գոտում ընդգրկված Սառնաղբյուր բնակավայրի համար սահմանված շինության 0.0743 գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

41.97 քառակուսի մետր X 6000 դրամ X 0.0743 = 18 710 (տասնութ հազար յոթ հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամ:

գ) Ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափը սահմանվում է **271270 (երկու հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր յոթանասուն)** Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի **900495101447** հաշվեհամարին:

դ) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Պարտավորեցնել անշարժ գույքի համասեփականատերերին՝ սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներին սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Պաշտոնակատար

<<04>> ապրիլ 2023 թվական

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 103-Ա

04 ապրիլի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ 08-043-0022-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 72-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին,3-րդ հոդվածի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ կետի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Կամսար Գառնիկի Գալստյանի կողմից Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատարին ներկայացված 2023 թվականի հունվարի 1-ի դիմումը՝ 1990 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինական ճանաչելու մասին չափագրական ընկերության կողմից ներկայացված հաշվառման 2023BCEVCJ ծածկագիրը. **որոշում եմ՝**

Հաշվի առնելով, որ քաղաքացի՝ Կամսար Գառնիկի Գալստյանին /ծնված՝ 13-ը մարտ 1960 թվական, անձնագիր AV 05777142 , տրված 28.12.2022 թվականին, տրված 022-ի կողմից/, Պետրոսյան Մարինե Շիրակի /ծնված 02.02.1969թ./, Գալստյան Լոնյա Կամսարի /ծնված 19.09.1986թ./, Գալստյան Տիգրան Կամսարի /ծնված 11.01.1989թ./ համատեր սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրի 9-րդ փողոց, թիվ 3 հասցեում գտնվող 08-043-0022-0008 կադաստրային ծածկագրով բնակելի տունը, հիմք ընդունելով՝ (Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15.04.1991 թվականի N3 որոշման): 1990 թվականին ինքնակամ կառուցված 385,52 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի կառույցը, բնակելի տունը՝ 161,16 քառակուսի մետր, բնակելի տուն (ձեռնահարկ)՝ 192,90 քառակուսի մետր, շվաքարանը՝ 31,46 քառակուսի մետր, բնակելի կառուցապատման նպատակով, առկա շենք շինությունները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության շինությունները ճանաչել օրինական:

2. Հաշվի առնելով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 22.1-րդ կետի հիմքով քաղաքացիները ազատվում են նշված կարգով սահմանված վճարների գանձումից:

3. Օրինական ճանաչված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամսի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

4. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներին սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատարի **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ 08-043-0022-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ N72-Ա** որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
Պաշտոնակատար

«04» ապրիլի 2023 թվական
Քաղաք Մարալիկ